

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Հ ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Ս Ր Թ Ր Ո Ր Ն Ի

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ն Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋԻՆԿ 1900 ԹԻԱԿԱՆԻ

Մ Շ Ա Կ

(28-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

ՄՇԱԿԸ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՈԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԱՌԹԱՍՐ

ԲԱԺԱՆՈՐԻԱԳԻՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվա-
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝
5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԻԱԳԻՆՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պետք է վճա-
րեն տարեկան 6 դոլար: Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ: Պարսկաստանի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՆԱԿԱՆ (Բաղարմայա և Բարձրակայա փողոցների անկիւն):
Կարող թեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պետք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“,
իսկ արտասահմանից՝ TIFLIS, Redaction du journal armenien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ օրէնսդրութիւն.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌՈՒ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Կաթօրիկ պրօպագանդան Վանում. Կոյ-
րերը տեսնում են.

ԱՆՀՐԱՅԻՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

Բոլոր այն անձինք, որոնք հիացած են
մեր դարի գործարանական կեանքի հրա-
շալիքներից և բարձր են գնահատում
այն խոշոր արդիւնաբերութիւնը, որ տը-
ւին մերենները, շողին և երկարակատե-
թիւնը, չեն կարող մի և նոյն ժամանակ չը

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԱԹՈՒԿ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ՎԱՆՈՒՄ

Մինչդեռ Կ. Պոլսի հայ լրագրողները հաւա-
տացնում են, թէ Վանի մէջ համարեա այլ ևս
կրօնափոխ հայեր չը կան, և Անտօն Զնոյեան,
որ այնքան տխուր հուշակ ստացաւ Վանում
տեղի ունեցած տմարդի հոգեվաճառութիւննե-
րի ժամանակ, հետեւեալ նամակը գրեց իր պաշտ-
պան Հ. Շարաֆեանին. Նամակը տպված է
«Oeuvre d'Orient» հանդէսի մէջ և մեզ տը-
րուում ենք խորագրաւորաբար, որպէս զի մի նոր
նմուշ տուած լինե՞ք, թէ ինչպէս է գործում
կաթօրիկ պրօպագանդան Արեւելքում այն ժա-
մանակ, երբ կաթօրիկութեան հայրենիք Փրան-
սիան պատրաստվում է խիստ օրէնքներ հրա-
տարակել կաթօրիկ միաբանութիւնների դէմ:

Վան, օգոստոսի 22, 1899.

Սրբազան,

«Հաճեցէք ինձ թող տալ մի քանի խօսակցե-
լու ձեզ հետ Վանի և այն առաքելութեան մա-
սին, որ յաւերժապիշտակ գերապաճառ Ազա-
րեան հաստատեց այստեղ:

«Ես նախ և առաջ պէտք է յայտնեմ ձեզ իմ
ջերմ երախտագիտութեան արտայայտութիւնը
այն բարեբարութիւնների համար, որ դուք այն-
պիսի մեծահոգութեամբ մեզ արեցէք: Հայ-կա-
թօրիկ ազգը երբեք չի մոռանալ, որ ձեր առա-
տաճեռութեան շնորհիւ է, որ կաթօրիկու-
թիւնը մօտ գործեց Վան, որ դրա շնորհիւ է,
որ կաթօրիկութիւնը այնտեղ պահպանվում է և

խոստովանել, որ գործարանական կեանքը
ուշի իր մութ կողմերը, իր տխուր ե-
րեւոյթները, իր բացասական ազդեցութիւն-
ները: Մեր դարի լուսազոյն մտածողներից
և պետական գործողներից շատերը զբաղ-
ված են այն հարցով, թէ ինչ միջոցներով
կարելի է մեղմացնել գործարանների բա-
ցասական կողմերը և պաշտպանել ազգա-
բնակչութեան առողջութիւնը գործարա-
նական շրջանում: Այդ նպատակին է ծա-
ռայում և նորագոյն գործարանական օ-
րէնսդրութիւնը, որ աջող քայլեր է արել
ոչ միայն արտասահմանում, այլ և Ռու-
սաստանում:

Հաճութեամբ կարող ենք հաղորդել, որ
գործարանական խնդիրներից մի կարեւորը
և լուրջը ներկայումս քննութեան առար-
կայ է պետական շրջաններում: Ներկայ

վերջապէս ձեր առատաձեռնութեան շնորհիւ է,
որ կաթօրիկութիւնը յաղթող կը դուրս գայ այն
կռիւց, որ նա ներկայումս վարում է:

«Ես կարող եմ, յիշատի, հաղորդել ձեզ կատա-
րեալ վստահութեամբ, որ կաթօրիկութիւնը ար-
մատներ է բռնել այդ նահանգի մէջ, և եթէ
մեզ օգնեն, ոչ ոք այլ ևս չէ կարող նրան այն-
տեղից հալածել: Ի հաստատութիւն իմ այս
խօսքերի եւ կարող եմ ժամանայց անել հա-
մակրութեան այն արտայայտութիւնների վրա,
որ մեր նորագործները անդադար ցոյց են տա-
լիս մեզ, և այն իզուր ջանքերի վրա, որ գործ
է դնում մեզ դէմ Ներսէս եպիսկոպոսը, որը
Կ. Պոլսից յատկապէս ուղարկված է մեր գործը
քննելու համար: Այնչէ՛ք չը ինչայցի, ոչ յոր-
դոններ, ոչ խոստումներ, ոչ սպառնալիքներ,
ոչ էլ մինչև անգամ անազնի բաժաւանքներ
մեր ձեռքից խլելու համար մեր նորագործնե-
րին, որոնք պարզ լոյսի պէս տեսան, որ
միմիայն կիրքն է, որ անվատման պատ-
րաճրացրեց հայ եկեղեցու և կաթօրիկ եկեղե-
ցու մէջ:

«Դուք հեշտ կը հասկանաք, սրբազան, որ
բազմաթիւ հաւատացեալներ, որոնց թիւը այժմ
արդէն քսան հազարից անցնում է, մեր շուրջը
խմբելու համար մենք պէտք է մեծ ծախսե-
անք: Մանաւանդ մենք պէտք է մեծ գոհա-
բերութիւններ անենք, որովհետև նրանք, որոնք
չկրն եկած մեզ մօտ, աւելի առատօրէն էին օգ-
նութիւն ստանում: Սերմերի բաժանումը 20,000
ֆրանկից աւելի արժեքաւ, որ մենք նշանակել
էինք, ապա նպատակների բաժանումն յանձն
առանք, և թէպէտ, դժբաղդաբար, չը կարողա-
ցանք երկրադործներից շատերին արգելելու
կորստաբեր պարտքեր անել քրիստոնէի, կամ
իրանց ապագայ հուճեք ծախել, մենք ստիպ-

նոյեմբերի 3-ին, առեւտրի ղեկարարամեն-
տում սկսվեցին նիստեր այն յատուկ խոր-
հրդակցութեան, որ հրաւիրված
է քննելու հետեւեալ հարցերը.—գործա-
րանատէրերի պատասխան տալու
թիւնը բանւորների մահվան և հաշման-
դամութեան դէպքում, բանւորների բը-
ժշկական օգնութեան կազմակեր-
պութիւնը և անհափազաս բանւոր-
ներին դպրոցական կրթութիւն տալը:
Այդ հարցերը մի երկու տարի տուա՞յ են-
թարկել էին մանրամասն մշակութեան,
բայց չը ստացան օրէնսդրական ձև: Այժմ
ենթարկելով նոր քննութեան, նրանք կօղ-
ովեն այն փորձերից և ցուցմունքներից,
որ տուել է գործարանական կեանքը թէ ար-
տասահմանում և թէ՛ Ռուսաստանում:
Այդ պատճառով խորհրդակցութեան մէջ
մասնակցում են գործարանատէրեր և հը-
մուտ մասնազէտներ, որոնք ծանօթ են
եւրօպական գործարանական կեանքին:

Առեւտրի ղեկարարամենտի տաղանդաւոր
ղեկավարի նախաձեռնութեամբ յարուցած
հարցերը մեծ նշանակութիւն ունեն և
մեր երկրի գործարանական շրջանի համար,
մասնաւորաբար հարուստ շրջանի, որտեղ գործա-
րանները ժողովել են մեծ թւով աշխատող-
ներ և որտեղ շատ անգամ տեղի են ու-
նենում ֆիզիքական վնասների ամեն տե-
սակ դէպքեր: Բարձր վարչական շրջան-
ները համակրութեամբ են վերաբերվում
խորհրդակցութեան պարապմունքներին,
ուստի յոյս կայ, որ և Ռուսաստանը կու-
նենայ նպատակայարմար օրէնսդրութիւն
յարուցած հարցերի վերամբարմամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Տրանսվալեան պատերազմը այնքան անար-
դար առիթներից ծագեց, որ ամբողջ Եւրօպայի
ժամուր Անգլիայի դէմ է. բացառութիւն կազ-
մում է միայն թիւրքաց ժամուրը, որ լաւ կա-
շառքներ է ստացել անգլիական մի ինչ-որ ըն-

ված էինք պահել 12,000 ֆրանկից աւելի՝ օգ-
նութեան գալու խիստ կարօտներին:

«Մենք պարտաւոր էինք բացի դրանից վար-
ձել չինութիւններ, որոնց մենք առժամանակ
եկեղեցիների և դպրոցների փոխարկեցինք՝ երե-
քը Կրթողութեան, մէկը քաղաքի մէջտեղում:
Մենք նորեւն վերցրինք մէկ ուրիշ տեղ Արաբ
թաղում, որ կը բացվեն մէկ եկեղեցի և երկու
դպրոցներ: Մենք ունենք մէկ դպրոց Իսթե-
ֆէյոյում, և շատ գիւղեր սպառում են իրանց
հերթին: Ես չեմ կարող չը յիշել ուսուցիչների
նոստրիկների, կան կարասիքի, գրքերի վրա արած
ծախսեր, և այլն: Այս դեռ ևս սկզբնական
կազմակերպութիւնը մեզ թանգ է նստում,
սպասում է սպառել մեր միջոցները, և մենք
հասել ենք մի այնպիսի քաղաքի, երբ պարտե-
րի ծանրութեան տակ ընկնելով, մենք ստիպ-
ված կը լինենք ձեռքից թողնել մի գործ, որի
հետեւանքները այնպէս գեղեցիկ, այնպէս մխի-
թարական են եկեղեցու համար: Միմիայն մեր
աղբատները չեն, որոնց ստիպված կը լինենք
մերժել. մենք պէտք է դեռ փակենք մեր դըպ-
րոցները և խափանենք մեր գործը, սպասելով,
որ մենք կազմավենք մեր թշուառութիւններից,
մեր աղաղակով պարտքերից:

«Այն, ինչ գրում եմ, միաժամանակ վերաբը-
րում է և զօմինիկեան գերապատիւ հայրերին,
որոնց դրամաբով, երկար ժամանակ դատարկ
և պարտքերով ծանրաբեռնված, չը կարողացաւ
ինձ օգնութեան գալ: Մենք մեր ջանքերը և
մեր միջոցները միացրինք, այդ միութեան մի-
ջոցով հասնելու աւելի արագ և լրակատար
հետեւանքներին:

«Ես դիմում եմ ձեր և հայկական գործի կօ-
միտէի բարեհաճութեանը: Եթէ դուք ցանկա-
նում էք, որ մեր գոհաբերութիւնները անօգուտ

կերութիւնից: Այդ ընդհանուր հակակրօնիւնը
մի շատ լաւ նշան է, որ ժամանակակից մարդ-
կութիւնը սովորում է երկրպագել ոչ թէ ոյժին,
այլ բարոյականութեան, որ նա ուղում է որո-
նեկ ամեն բանի մէջ նախ և առաջ արդարու-
թիւն: Բայց միթէ արդարութիւն որոնողներ չը
կան և Անգլիայում, այն երկրում, որ արեւնա-
հեղութիւնների դաշտ բաց արեց հարաւային
Աֆրիկայում. ուրիշ խօսքերով—արդեօք ամբողջ
Անգլիան է մեղաւոր, որ ծագեց տրանսվալեան
պատերազմը: Պարաւանտի նիւտերը, որոնք
տեղի ունեցան պատերազմը սկսելուց յետոյ,
բաւական են ցոյց տալու, որ ամբողջ երկրը
չէ կարող պատասխանատու համարվել այն ա-
մօթալի ջայլերի համար, որ արեց Զէմբէրլէն իր
նման ուրիշ չօլինիստների հետ: Մենք արդէն
բաւականացա՞ք վկայութիւններ ենք բերել, ո-
րոնք ապացուցանում են, թէ անգլիական չօլի-
նիզմը, դրամատէրերի շահերը պաշտպանելու
համար, կարողացաւ հրահրեցնել անգլիական
ազգի միտքը: Կարգադէր Լօնդօնից դրված բոլոր
թղթակցութիւնները, և դուք կը տեսնե՞ք, որ
ներկայ անբաղդ պատերազմը անգլիական թիւ-
չօլինիզմի ժամանակաւոր յաղթութիւնն է, որ
հասարակական կարծիքը երկար խաբված չի
մնայ: Նոյն իսկ մարկիզ Սուրբիւրի նորեւն ար-
տասանած մի ճառի մէջ ասեց, որ Անգլիան
նպատակ չունի նուաճել Տրանսվալը, դարձնել
նրան իր սեփականութիւն: Սակայն չօլինիստ
լրագրողները, որոնք այժմեան նեղ հանգամանք-
ների մէջ հրապարակի տէրերն են, առաջին մի-
նիստերի այդքան պարզ խօսքերի դէմ են գնում
և պահանջում են, որ իրանց հայրենիքը համար
այնքան բաշտութեամբ կուտղ բոլորների երկրը
անգլիական հող դառնայ: Այսպէս թէ այնպէս,
Անգլիան, շնորհիւ այն հանգամանքի, որ թող է
տուել իրան ընկնել Զէմբէրլէնների թակարդի
մէջ, ընդհանուր հակակրօնեան առաքայ է
դարձել: Դա ընական է, բայց համակրութիւն-
ների և հակակրօնիւնների մէջ էլ պէտք է ար-
դարութեան մի յայտնի չափ պահպանել: Այդ
չափից դրված եմ մի քանի թիւնդ անգլիա-
տեացիներ, որոնք ամեն քօպէ պատաստ են
հաւատացնելու միաբնակներին, թէ ծովերի հը-
պարտ թագուհին ոչինչ արժանաւորութիւն չու-

չանցնեն, որ մեր հաւատացեալները առաջադի-
մեն, որ մէկ նոր և գեղեցիկ թեմ աւելանայ
հայ կաթօրիկ եկեղեցու, խնդրում եմ ձեզ ե-
րես չը դարձնել մեզանից և մեզ միջոց տալ
աւարտելու մեր սկսած գործը:

Անտօն Զնոյեան

ԿՈՅՐԵՐԸ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներս մեծ համբաւ է ստա-
ցել Լօնդօնի պրօֆէսոր բժիշկ Պետեր Սոթինսի
գիրտը, որով նա խոստանում է կոյրերին տես-
նել տալ: Նա անդադար աշխատում է այս ան-
հաւատարի նպատակին հասնելու, բայց մինչև
այժմ նրա ստացած արդիւնքը այնքան նուազ է,
որ յարգելի գիտնականը դեռ դադարի է պա-
հում իր հետազոտութիւնները և ստացված ար-
դիւնքը, մինչև որ հնարած միջոցները բաւա-
կանաչափ կատարելագործվեն:

Անձ թէ ինչ է պատմում մի ֆրանսիացի
բժիշկ, դօկտօր Կար, որը գնացել էր Լօն-
դօն, Սոթինսի մօտ այս գիրտի մասին տեղեկու-
թիւններ հաւաքելու: «Պրօֆէսոր Սոթինսը ներս
տարաւ ինձ մի մութ սենեակ և կապեց այ-
քերս: Բոլորովին կուրացեալ, ես միայն կարո-
ղանում էի լսել ինչպէս նա դէս ու դէն էր զը-
նում, ինչպէս չընկալեց լուցկին և վառեց
լամպը, բայց անկարող էի, չը նայելով իմ բո-
ւոր ջանքերին, լոյսի նշող անգամ տեսնել. այս
միջոցին ես զգայի, որ պրօֆէսորը իր ապագա-
րատը (գործիքը) գրեց քնմքերի և իսկոյն մօ-
տիս առաքականներ մի մաշկ կիսադուսով դար-
գաւրվեցին, իսկ մի-քիչ յետոյ ես կարողացայ
պարզ նշմարել աչքերիս առաջ մի ձեռք և համ-
բել մատերը:

«Փոքր առ փոքր մութը աւելի ևս ցրվեց, և ես

նի, միայն վատութիւն է աշխարհի համար և այլն: Մի քանի տարի առաջ ռուս պահպանողականները մէկը, պատմաբան Բլոկայսկի, յայտնում էր այն ծիծաղելի միտքը, թէ Անգլիան վախենում է Ռուսիայից, որովհետեւ վերջինս նրանից շատ ուժեղ է: Այժմ էլ Կամարովը «СВѢТЪ» լրագիրն է ջնջում Անգլիան քաղաքակրթված, քրիստոնեայ երկիրներ չարքից:

Կարելի բան է—ասում է նա,—որ մի քրիստոնեայ պետութիւն, որ քրիստոնեաների դէմ մղած պատերազմում թոյլ է տալիս ուխտադրութիւն և զազանութիւն, երբ հակառակորդները զարմանալի մարդասիրութեամբ են վերաբերվում անգլիացի զինուորական և վերապաշտպաններին,—կարելի բան է, որ նա ապագայում էլ իրաւունք ունենար անուանվել քրիստոնեայ, լուսաւորված պետութիւն: Կարելի է, որ կուստոբական ներպայան չարունակէ իր ընտանիքի հաւասար իրաւունք ունեցող անդամ համարել այդ Անգլիան միայն պատմաբանով, որ Անգլիան հարուստ է, շատ նուրբ, գործարաններ և փող ունի, որ Անգլիայում մի ժամանակ ծնվել են Շլեսլիքներ և Բայրոնի պէս մեծ բանաստեղծներ և Գլադստոնի պէս լուս մարդիկ:

Թշնամութիւնը միանգամայն չը պիտի կուրացնէ մարդուն: Անգլիան միայն այն չէ, ինչ կարծում է Կամարովը պէս մի հրապարակախօս: Պատմութեան իւրաքանչիւր ձեւնարկ կարող է ապացուցանել այդ բանը: Վերջերքէ հենց Փրանսիայի Սենիորսի «XIX դարի պատմութիւնը» և քոյր պետութիւնների գլխին կը տեսնենք Անգլիան: Ինչպէս «XIX դարում»—ասում է հեղինակը,—Անգլիան ամբողջ ներպայան համար քաղաքական օրինակ էր: Անգլիական ազգը և ոչ թէ մի ուրիշ ազգ ստեղծեց ժամանակակից ներպայան քաղաքական կազմակերպութիւնը, սահմանադրական միապետութիւն և ազատութեան երաշխաւորութիւններ. միւս ազգերը միայն հետեւում էին անգլիական ազգին: Այսօր քանի էլ բաւական է ցոյց տալու համար, թէ Անգլիան ինչ դեր ունի աշխարհի վրա: Ծիշդ է, անգլիական ազգն էլ ունի բացառական կողմեր, բայց լուսնի տակ ով է միանգամայն կատարեալը: Մենք ներկայ պատերազմի ժամանակ համակրում ենք բոլորներին, որովհետեւ արդարութիւնը նրանց կողմն է. մենք երբեք չենք կարող արդարացիներ այն անարդարական պատերազմը, որ վերաց Անգլիան շինաստանի դէմ՝ ափիոնի առևտուրը դուռով այնտեղ մտցնելու համար: Բայց այդ բոլորը մեզ չի արգելի մեծաբեղ անգլիական քաղաքակրթութիւնը, անգլիական միտքը, որ այնքան փայլուն ներկայացուցիչներ է տուել և այնքան առաջացրել է ամբողջ մարդկութեան մտաւոր զարգացումը: Անգլիացիները բոլորի կերպով են վարվում գերի և վերաւոր բռնութիւնի հետ: Մենք ամենայն իրաւունքով կը դատապարտենք այդ տմարդութիւնը, ինչպէս երբեք չենք համակրի Չէմբերլէնների գայլային քաղաքականութեան: Ում շատ է տուած, նրանից շատ էլ պահանջվում է, այս

նշմարեցի սենեակի զանազան կարասիները: Այնտեղ կար երկու սեղան և ութ աթոռ, որոնց եւ հնչուութեամբ համարում էի: Այդ միջոցին եւս զգում էի, որ եթէ փորձը մի քիչ էլ տեւի, կարող էր լինեմ իմ սովորական տեսողութիւնը գտնել. մի և նոյն ժամանակ զգում էի քիչքիչ վրա թալ կելեարական հոսանք, բայց յանկարծ ապագարատ վերցրեց և եւս ընկալ դարձեալ նոյն անթափանցելի խաւարի մէջ: Փորձը վերջացած էր:

Նկարագրելով իր այս տեսածը, կամ աւելի ճիշդ ասած, զգացածը, բժ. Կազը աւելացնում է. «Երաւունք ունեմ արդօք հետեւեցնելու, որ պրոֆէսոր Ստիւն ճշմարիտ է ասում, թէ գտել է կոյրերին լոյս տալու հնարը, այդ չը գիտեմ: Գոյցէ պրոֆէսորը մի խաղ է խաղացել իմ գրելին, գուցէ աչքերի կապը թափանցիկ էր, գուցէ նա գործ է գրել Բենտոնի լոյսը: Այս բոլորը ենթադրելի է, բայց եւս համոզված եմ մի բանի մէջ—այն, որ չը նայելով իմ լարած ուշադրութեանը, եւս ոչ մի խաղէութիւն չը գտայ: Նոյնը ասում են և ուրիշները, որոնք իրանց նոյնպէս փորձի էին ենթարկել:

Անտարակոյտ Ստիւնի գիւտը անկարելիութեան չափ արտակարգ է և կարող է անհաստատել թուալ: Սակայն ինչ անկարելի բան կայ գիտութեան առաջ. իսկ Լօնդօնի պրոֆէսորի գիւտը հիմնված է մի ճշմարիտ գիտական սկզբունքի վրա:

Բանն այն է, որ տեսողութեան կենտրոնը աչքը չէ, այլ ուղեղն է: Մենք ուղեղով ենք տեսնում, իսկ աչքը լոյսը հաւաքող և ներս (ուղեղի մէջ) մղող մի գործիք է: Տեսողութիւնը այսպէս է կառավարվում. լոյսը մի որ և է առարկայից ընկնում է մեր աչքի բլբլը, թափանցում է աչքի ամբողջ խնամքը (որը լրված է

սկզբունքը իրաւունք է տալիս ամեն մէկին անողը խոտութեամբ վերաբերվել անգլիացիներին այն դէպքում, երբ նրանք ակամարկային գործեր են կատարում:

*

Պետերբուրգում նոյեմբերի մէկից սկսեց հրատարակվել մի նոր ամենօրեայ լրագիր «Свѣтѣ» Курьеръ» անունով: Մայրաքաղաքի մամուլը համակրութիւն է յայտնում այդ նոր օրգանին և երկարակեցութիւն է ցանկանում իր առաջին համարում լրագիրը, խոսելով իր ուղղութեան մասին, ի միջի այլոց բնորում է աւատարկան կայսր Ֆրանց-Յովսէփի խօսքերը, որ նա ասաց 1873 թ.ին մի գրական ընկերութեան ներկայացուցիչներին:

«Նա—ասաց կայսրը—կատարելապէս պահանջում եմ ազատ մամուլի կարեւոր նշանակութիւնը: Նա միաժամանակ նպատակում է մտաւոր կեանքի զարգացման և սովորեցնում է ճանաչել և առողջ կերպով ընկել այն ամենը, ինչ վերաբերում է հասարակական կեանքին: Նա փայփայում եմ յոյս, որ մամուլը, յիշելով իր բարձր նշանակութիւնը, ամեն ժամանակ կը կարողանայ պահպանել իր սեփական արժանաւորութիւնը և որ նա, չը մտնելով մասնաւոր և ընտանեկան կեանքի շրջաններ, միշտ կը ընկնէ պետական գործերը, լցված անկախութեան ոգով, ինչպէս և զէպի Նայքերը տաճած սիրով:»

Որքան գեղեցիկ բան կը լինէր, եթէ մամուլի ներկայացուցիչներն այնպէս հասկանային իրանց պարտաւորութիւնները, ինչպէս հասկանում էր 26 տարի առաջ թագաւոր ճաւախօսը:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԻԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 6-ին
«Մշակ» № 203-ի մէջ կարդացի տիկին Փանոսեանի նամակը մի լուրի առթիւով (տես «Մշակ» № 193), որ ասված է, թէ տիկին Փանոսեան բարեգործական նպատակներով գիտէ նուիրաբերութիւններ և խոստումներ անել, բայց վերջը հրաժարվում է կատարելուց: Յարգելի տիկինը այդ լուրն պատասխանելով խոստովանում է Վեհափառ զինակ և նուիրաբերութիւններ անելը, բայց սուտ է համարում խոստումը կատարելուց հրաժարվելը:

Պ. լրատուն իր յիշած կալուածներին թէ ի նուիրած գումարի քանակութեան վերաբերութեամբ թէ և մի քանի սխալներ է արել—նա փոխանակ երկու կալուածներին և 3000 ռուբլու լուծել է երեք կալուածը և 4000 ռուբլու—բայց որ պատուարժան տիկինը վերջը հրաժարվել է իր խոստումը կատարելուց, այդ ճիշդ է: Թողնեմք պաշտօնական լիզիւրը խոսել կարգով: 1) Օրդոնոսի 3-ին, 1894 թ. № 1308 գրութեամբ Վեհափառ Վաթիկոսի որւամը գրել է Վրաստանի և Իմէրէթի հայոց թեմակալ առաջնորդին, թէ Վեհափառ Վաթիկոսը կամենում է այրի Փագոսի Փանոսեանի հանգուցեալ դստեր մարմինը, որ աւանդված է հողի մէջ Խօջիվաճի գերեզմանատանը, թողաւորել տեղափոխելու Թիֆլիսի Վանքի եկեղեցու գաւիթը և այնտեղ թաղելու: Տիկինը դրա համար նուիրում է էլմիամանի մայր Աթոռին երկու կա-

թափանցիկ հեղուկներով), ընկնում է տեսողական ներքի վրա (որը կապում է աչքը ուղեղի հետ), գրգռում է սրան և հենց այս գրգռումն է, որ ներքի միջով անցնում է ուղեղին և որդոնում է նրա վրա յիշած առարկայի պատկերը ինչպէս մի լուսանկարչական պատկեր: Այնպէս որ տեսողող իսկապէս ուղեղն է: Այստեղից երևում է որ, 1) եթէ կարենք տեսողական ներքը, այսինքն աչքադնդի և ուղեղի միջի կապը, աչքը կը կուրանայ, և 2) որ եթէ մի որ և կերպով լոյսը գցենք ուղեղակի ուղեղի վրա (կամ աւելի գիտնականօրէն ասելով, եթէ գրգռենք ուղեղը այն ձևով, ինչ ձևով որ լոյսն է նրան գրգռում), այն ժամանակ կայր անպատճառ պիտի տեսնի, այն ժամանակ աչքադնդը իր ներքով մի աւելորդ բան կը դառնար:

Ուրեմն ինչ պիտի անել, երբ մէկի աչքը և ներքը ոչնչացած են, կամ հիւանդ և անընդունակ են դարձել այն ևս իրանց միջնորդ դերը կատարելու: Պատասխանը պարզ է. պէտք է մի որ և է հնարով լոյսը ուղեղակի ուղեղի վրա պ գցել: Բայց չէ որ այդ անհնար է, քանի որ ուղեղը փակված է զանգի մէջ, այսինքն ուղեղ անթի մէջ, որը լոյսը չէ կարող թափանցել:

Այն հէնց այս հնարն է, որը ձգտում է զբոնել պրոֆէսոր Ստիւնը: Նա հնարել է մի ինչ, որ ապագայում, բազմապատ երևի երկու մասից, մէկը փոխարինում է աչքը, ընդունելով լոյսը, կենտրոնացնելով նրան և հարկողելով մի ուրիշ ապագարատի, որը տեսողական ներքի դեր է խաղում և որը ելեքտրական գործիք է: Այս ելեքտրական մասը միջնորդ է դառնում, այս, այսպէս ասած, արուեստական աչքի և ուղեղի մէջ, նրա միջոցով է, որ լոյսը թափանցում է

լուծանքի, արժողութեամբ 16,000 ռուբլու, 1000 ռուբլի Վանքի եկեղեցուն, 1000 ռուբլի ս. Նունէի և 1000 ռուբլի կոյրերի ուսումնարաններին, և խնդրում է հարկաւոր տեղեկութիւններ հաղորդել: 2) Փետրվարի 4-ին 1895 թ.ին № 106 թեմակալ առաջնորդը հաղորդում է Վեհափառ Վաթիկոսին կարեւոր տեղեկութիւններ նուիրած կալուածներին և ընտելութեամբ ստեղծված՝ հանգուցեալի գիւղը նորին յանձնված լինելու մասին: 3) Մարտի 2-ին, 1895 թ.ին, Վեհափառ Վաթիկոսը հեռագրում է. «Թողաւորում եմ տեղափոխել Փանոսեանի աղջկայ մարմինը Խօջիվաճից Վանքի եկեղեցու բակը՝ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ: 4) Մարտի 10-ին, 1895 թ.ին, № 826, Թիֆլիսի կոնսիստորիան գրում է զլիսաւոր կառավարչապետի գիւտնատանը ստանալու լիցիտուութիւն և քաղաքական իշխանութիւնից՝ յայտնելով հանդերձ, որ յարգելի տիկինը նուիրել է 2000 ռուբլի ս. Նունէի և կոյրերի ուսումնարաններին: 5) Նոյեմբերի 20-ին, 1895 թ.ին, կառավարչապետի գիւտնատանը յայտնում է կոնսիստորիային, թէ արգելք չը կայ կառավարչապետի կողմից, բայց նախապէս պիտի ներկայացնել 2000 ռուբլին, որից յետոյ միայն կարելի է կարգադրել տեղափոխելու համար: 6) Նոյեմբերի 22-ին, 1895 թ.ին, № 4230, կոնսիստորիան գրաւոր յայտնում է տիկինը կառավարչապետի գիւտնատան պահանջը—ներկայացնել 2000 ռուբլին: 7) Ինկոստորիան 9-ին, 1895 թ.ին, № 1667, Վեհափառ Վաթիկոսին գիւտնատանը գրում է թեմակալ առաջնորդին՝ նախապէս հաստատել տիկին Փանոսեանի նուիրած կալուածները և ապա տեղափոխել հանգուցեալի դիակը: 8) Նոյեմբերի 1-ին, 1896 թ.ին, № 896, Թիֆլիսի եկեղեցիները գործակալը յայտնում է կոնսիստորիային, թէ այրի Փագոսի Փանոսեանից բազմաթիւ հարկեր է, որ ներկայանայ կոնսիստորիային կատարելու իր խոտումը, բայց նա բնաւ չէ յոժարում ներկայանալ:

Սրանից յետոյ թողնում եմ ընթերցողին դատել, թէ պատուարժան տիկին Փանոսեանը հրաժարվել է իր խոտումը կատարելուց, թէ ոչ: Տիկին Փանոսեան իր նամակում խոսում է մի քանի մասին, որին զիմել է և խորհուրդ հարցնելով տեղեկացել օրինական ճանապարհին իր հանգուցեալ աղջկայ դիակը տեղափոխելու համար: Այդ քանիսն տողերիս գրողն է: Ահա իսկական եղբորութիւնը:

1894 թ. ամառը եւս հրաւիրվելի յիշեալ տիկինը տուն և ծանօթացայ: Տիկինը, ի միջի այլոց, լայնեց ինձ, որ ինքը ժառանգ չունի և կամենում է իր աղջկայ, որ նա լի վախճանվել, և իր յիշատակը յաւերժացնելու համար նուիրել ազգօգուտ հաստատութիւններին իր բոլոր կարողութեան մի մասը այժմից, իսկ մնացածն իր մահից յետոյ: Նա յայտնեց ինձ և իր արտի ցաւը, որ չէր կարողացել իր սիրելի աղջկիւր թողել Վանքի եկեղեցու գաւիթը: Տիկինը խոստացաւ իր ամբողջ կարողութիւնը, որ այդ ժամանակ համարվում էր 140,000 ռուբլի, իր կենդանութեամբ և մնացածը իր մահից յետոյ յատկացնել այդ նպատակի համար: Դրանից յետոյ տիկինը նոտարական կարգով կտակ կազմեց և յիշեց այն էլ, որ իր մահվանից յետոյ իրան և թաղին Վանքի եկեղեցու գաւիթում, իր աղջկայ մօտ:

Այնուհետեւ եւս գրեցի խնդրագիր Վեհափառ Վաթիկոսին անունով և ոգևորված գնացի Էջ-

է գանգի ոսկորները: Ինչպէս տեսնում էք, գաղտնիքը հէնց այս ելեքտրական ապագարատի մէջն է:

Եթէ ճշմարիտ որ այս հնարը գտնված է, այն ժամանակ աչքերը կորցնում են իրանց նշանակութիւնը, իրեն դիտողական օրգան, այն ժամանակ կարելի կը լինի երազել, որ շուտով կոյրերը մի փոքրիկ գործիք կը կապեն զլիններին, կամ կը գնեն փչացած աչքերի բուժում և աղտոյ կը զբաղվեն իրանց գործերով:

Նրազ, բայց հրաշքի երազ!

Եթէ այս երազը մի որ և է հիմք ունի, մենք կարող ենք երազել նոյնպէս, որ խուրն էլ մի որ կը լինէ: Սկզբունքը նոյնն է, որովհետեւ լսողութիւնն էլ, տեսողութեան նման, կատարվում է ուղեղի մէջ, իսկ իսկական ականջը ձայն ժողովող և իր լսողական ներքով այդ ձայնը ուղեղին հաղորդող մի գործիք է (ապագարատ է): Մի խօսքով ականջը նոյն ձևի ապագարատ է ձայնի մտածել, ինչ որ աչքը լոյսի համար է և նոյն միջնորդի գնել է խաղում գրտի աշխարհի և ուղեղի մէջ: Հետեւաբար նոյն սկզբունքը և նոյն հնարը գործադրելի է լսողութեան վերաբերմամբ եւս:

Ուրեմն շատ մեծ ֆանտազիստ էլ չը պիտի լինել, ենթադրելու համար, որ մի որ հնարաւոր կը լինի մի ուրիշ, գուցէ և Ստիւնի գործիքի նման, մէկն էլ գտնվի խուրնին լսողութիւն տալու համար:

Ով որ ծանօթ է վերջին դարի գիտութեան արած վիթխարի ջանքերին, նրան այս յոյսերը չենթը չեն լուսայ, ինչ որ այսօր խելագարի ցընորք է համարվում, վաղը կարող է իրագործվել: Տեղեկութիւն (հեռախօսի) գիտեց կարծեմ մի կամ մի քանի տարի առաջ, յայտնի երևակա-

միածին և անձամբ ներկայացրի խնդրագիրը Վեհափառին: Սա խորհրդակցեց այդ մասին տեղակալ երեմիա արքեպիսկոպոսի հետ: Վերջինս պնդում էր, թէ յիշեալ տիկինը յուսալի անձնաւորութիւն չէ և սինօդից բերել տալով գործեր, պատուեց, թէ ինչպէս այդ տիկինը զիմել էր սինօդին իր այդ աղջկայ մահվան ժամանակ և 5000 ռուբլի առաջարկելով էլմիամանի օգտին, խնդրել էր թողաւորել թաղելու Վանքի եկեղեցու գաւիթում: Սինօդը իրաւունք տուեց, բայց հրամայեց կանխիկ ստանալ դրամը և ապա թաղել: Տիկինը իր խոստումը չէր կատարել և նրա աղջկին էլ չէր թաղվել: Տեղակալ արքեպիսկոպոսի պնդումը Վեհափառ Վաթիկոսին կասկածներ մէջ ձգեց, ուստի և հրամայեց դիւանապետ Խորէն եպիսկոպոս Ստեփանէէին թուղթ գրել Վրաստանի և Իմէրէթի առաջնորդին ստուգելու տիկինը խնդրագրի մէջ յիշեալ կալուածները, նրանց արժէքը և կատարական եկամուտը, պարտքից ազատ լինելը, օրինաւոր կալուածագրեքը, այլ և ընտելութեամբ յայտ բերել ճշդին յանձնված լինելը և զեկուցանել Վեհափառին:

Սոսկայն ուրեմն պարզ երևում է, որ եւս գնացել եմ էլմիամանի, որ Վեհափառ Վաթիկոսին յայտնի է եղել իմ գնալը և տիկինը խնդրել, որ եւս 2000 ռուբլին ոչ թէ կողմնակի ծախսերի համար եւս պահանջել, ինչպէս ինքն է ասում, այլ կոնսիստորիային ներկայացնելու, որ առաջարկի կառավարչապետի գիւտնատան և այլն: Կամիաֆկա կոչված պարզին եւս ստացել եմ 1894 թ.ին Կայսրանիսն օրիորդաց ուսումնարանի վարչութեան գրասօր խնդրանքը և թեմիս առաջնորդի՝ սեպտեմբերի 15-ին 1894 թ. № 646, միջնորդութեամբ, 25 տարի ձրապէս ուսուցչութեան պաշտօն վարելու համար յիշեալ ուսումնարանում:

Ինչ վերաբերում է հարկի րուբլուն, եւս ստացել եմ տիկինից և գործարքել եմ էլմիամանի գնալ-գալու, նրա դործերը վարելու, կալուածները գնահատելու, ճարտարապետ տանելու, թղթերի պատճեններին, մարկաների և կապի ծախսերի համար: Եթէ հաշուելու լինեմ, կարծեմ, յարգելի տիկինը դարձեալ ինձ պարտք կը մնայ: Եթէ խնդրեք հարկի րուբլու վրա է, եւս նրան սիրով կը նուիրեմ այն նպատակին, որի համար յարգելի տիկինը կտակով յատկացրել էր իր ամբողջ կարողութիւնը, միայն թէ նա կտակի պատճենը, որ ինձ մօտ էր և եւս վերադարձրի իրան, ներկայացնի էլմիամանի սինօդին ի պահպանութիւն:

Նգնիկ աւագ քահանայ երդնկեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԻԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, նոյեմբերի 4-ին

Առ. 27 սեպտեմբերի Գաւառ-Փաթիպայի մահաճանի գումարն էր 2067 ռ. 75 Կ: Ստացանք տոկոս—72 ռ. 37 Կ: Կարասուրազարից պ. Պենկերիսից 5 ռ. և Գ. Սաղ-ճեանից 5 ռ.: Ուրեմն առ սոյն 4 նոյեմբերի ողջ գումարը մեր մօտ կը լինի 2150 ռ. 12 Կ: Նուէրները ուղարկելի՝ Нахичеванъ на Дону Григорію Чалхушану.

Գրիգոր Չալխուշան

յական պատմութեանը գրող Ժիւլ Վերնը մի պատկեր էր գրել, որի մէջ նա իբրեւ մի վիթխարի ցնորք պատմում է, ինչպէս երկու ամուսիններ, մէկը Ամերիկայում և միւրը Պարզում խօսում են միմեանց հետ և տեսնում իրար: Չանցաւ մի կամ մի քանի տարի և Էջիստոնը հնարեց իր զարմանալի հեռախօսը, որի միջոցով մարդիկ երկրից երկիր խօսակցում են իրար հետ, ինչպէս մի սենեակում նստած, և գուցէ հեռու չէ այն ժամանակը, երբ կիրաւորվի Ժիւլ Վերնի երկրորդ ցնորքը—նկարը, որը միջոց կը տայ ամուսիններին տեսակցելու իրար հետ հեռաւոր երկրներից:

Մարդու ձեռքին մի անսպասելի և անհուն ոյժ կայ, որը յեղափոխել է հիմնական մեր գիտութիւնը, քաղաքական կրթութիւնը, որը խոստանում է յեղաշրջել մարդկութեան կեանքը և միտքը, և որը անսպասելի գիւտերի, զեռանայտ ոյժերի մի առատ աղբիւր է մեզ համար: Մարդ չէ կարող սառնասիրտ կերպով և առանց խոր կազմուցելու մտածել այս հարցերի վրա: Ինչ է սպասում մարդկութեանը ապագայում: Չը կայ մարդու մտքում մի այնպիսի ցնորք, որի համար երաշխաւոր լինէինք, թէ մի օր չի իրագործվի:

Ի՞նչ որտեղ ենք մենք! Մարդաբան Լըբոնը ճիշդ է ասում, թէ մենք դեռ նորոշոր ենք սկսել զանազանվել միւս կենդանիներից, դեռ այն անցողական շրջանում ենք, որը տառնում է անասունների կեանքից զէպի մարդկայինը: Մենք դեռ նոր ենք մտնում մարդկութեան մասնակցութեան շրջանը:

Մարդ չէ կարող առանց սառնասիրտ մտածել գիտութեան ապագայ զարգացման մասին: Բժշ. Վ. Արծրունի

պարհի երկարութեամբ: Կէսօրից յետոյ ժողովուրդը ժամին ժամանակ կայսերական զոյգը, որին զինուորացիներ կայսերանում Ուէլսի իշխանը, Կէս-բրիլի և Նորկի դքսերը, որոնք բոլորն էլ գեր-մանական համազօգեաներով էին: Կայսրը և Կայսրուհին իսկոյն ճանապարհ ընկան ամբողջ, ուղեկցվելով որոտածայն «ուրաներով»: Կայսրը անյապաղ այցելեց թագուհուն:

ՕՐԱՆՇ-ԻՒՎԵՐ ԿԱՅԱՐԱՆ, 6 նոյեմբերի: «Քյոնիգսբերգ» գործադրութիւն: Բրիտանական զին-ւորական գեներալ, որոնք կենտրոնացած են Օ-րանժիան գետից դէպի հիւսիս, ինչպէս լսվում է, դեռ մինչև չափովայ վերջը առաջ կը շարժ-վին Կիմբրիջին ազատելու համար: Կիմբրիջից դէպի արևմուտք գտնվող շրջանում բռնկուեց մեծ գործունէութիւն են ցոյց տալիս: Նրէկ հե-տադնող պահակները վրա բերի վրա թագուհի-թիմարին սկսեց թնայնօթածութիւն:

ԼՕՆԻՍՆ: «Standard» լրագրից, գերմանական կայսերական զոյգի գալուստն նուիրված մի յո-դուածում, ասում է, որ աղղը միաբերան ող-ջունում այն աղամարդի ընտանիքին, որը նրա յարգանքն է վաստակել աշ միայն իրեն մեծ և բարեկամ պետութեան թագաւոր, այլ և որ-պէս թագուհու թուր: Նիէ: հանգամանքները ներքին նոցա մեծութիւններն աւելի երկար մնալ Անգլիայում, նրանք հաւանօրէն ամեն տեղ սրտազին ընդունելութիւն կը գտնեն: Ինչպէս էլ վերաբերվին այդ այցելութեան՝ ընտանեկան զորք կամ քաղաքական ակտ համարելով նրան, — այդ այցելութիւնը միատեսակ ախորժել է անդ-լիական աղղին:

«Morning Post» նկատում է, որ այսօր կայ-րը սիրալի կերպով ողջունվեց թագուհու հպա-տակները կողմից: Լրագիրը համոզված է, որ երկիրը, եթէ հանգամանքները ներքին այդ բա-նի, կայսրին աւելի սիրալի զգացմունքներով կը դիմաւորէր, քան ութ տարի առաջ:

«Times» ասում է, որ արքայական Վիկտոր-ամբողջում Վիլհելմ կայսրին ցոյց կը տրվի մի ընդունելութիւն, որը միայն թող արձագանք կը լինի այն դիմաւորութեան, որի առաջնայ կը լինէր նա թագաւորութեան ամեն մի ուրիշ մա-սի մէջ, եթէ դրա համար դէպքը ներկայանար: Կայսրին ողջունում են ոչ միայն որպէս թագու-հու թողան և մեծ աղղի թագաւորին, բայց և որպէս տղամարդի, որի անձնական աչքի ընդ-նող յատկութիւնները Գերմանիայից ոչ պակաս են գնահատում Անգլիայում:

Մնացած լրագիրները նոյն այդպիսի կարծիք-ներ են յայտնում:

Կ. ՊՕԼԻՍ: Թիւրք-ուսական սահմանորոշ յանձնաժողովը աւարտեց իր աշխատանքները: Թիւրքաց յանձնաժողովի գլխաւոր Տէվֆիկ-փա-շա ճանապարհ ընկաւ նոյեմբերի 3-ին:

Բոլղարական միտրոպոլիտը և Ասկիւրի մե-ծամեծները հեռագրով դիմեցին սուլթանին՝ խնդրելով չը թող տալ եպիսկոպոս ձեռնադրել Ֆիրմիլեանին, որովհետեւ դա կարող է անկար-գուծիւններ առաջացնել:

ՄԱԿԻՐԻ: Ժամատարով հիւանդանալու դէպ-

քը տեղի ունեցաւ պորտուգալական Ալպէրէ-նո դիւլի կայսրանում, որ գտնվում է սահմա-նի վրա: Պորտուգալական կառավարութիւնը հրամանագրեց առանձնացնել այդ կայսրանը, իսկ Սալամանեան նահանգի պրէֆէկտը սանի-տարական ամենաեռանդուն միջոցներ ձեռք առաւ:

ԹԱՔԱԳԻՐ՝ ԱՒԷՔՍԱՆԻՐ՝ ՔԱՒԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՋԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԿԻ-ՊԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1900 թ.

ԾՈՑԻ և ՊԱՏԻ (Երակ)

Օրացոյցները:

ԾՈՑԻ ՕՐԱՅՈՑՈՑԸ զարդարված է մի բանի հայ գործիչների պատկերներով, ունի նոր յաւելում, ընդարձակ բժշկարան, հարուստ երազանք և նոր գուարձարի վիճակարան:

ՊԱՏԻ ՕՐԱՅՈՑՈՑԻ մէջ կան բարոյական խրատ-ներ, նոր ծիծաղալարք առակներ՝ Մօլլա-Նասար-իղղից, Դաւիթ-Քէլից, Պըրլապուրց, արև ժողովրդական առանձններ, դիւղական լէյներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, գուարձարի պատմութիւններ, բը-ժշկական, տնտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Գները { Մօլլա — 20 կօպէկ
Պատրով գնողներին լինում է զիջում:
Դիմել՝ Ալեքսանդրօպ, Կարապետ Ապինյան կամ
Alexandrople, Karapet Apinian (Caucase).
4—20

Լ Է Օ
Դ Լ Ա Պ Ս Տ Օ Ն

ԳԻՆՆ Է 80 ԿՕՊԵԿ

Դիմել՝ Թիֆլիս, Կոնտոր Ըմեստա Իշդա-նիա Արմանսկի Եմից (Лориселиковская № 11) կամ Tiflis (Russie) Société de la pub-lication des livres Arméniens. Գրասենեակում վաճառվում են ընդերքութեան և այլ գրքերը: Ցանկացողներին գրացուցակ ուղարկվում է:
2—10

ԲԺԻՇԿ 3. Յ. ՂՕԿԻԵԼԵՆԵ

Ընդունում է՝ վեներական, արտական, մեք-թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին:
Առաւօտեան 9—12 ժամը
Ներկայից 5—7 ժամը:
Գանձակալայ փողոց, տուն Մարգարով, № 81:
(Ե. Տ. Ն.) 91—100

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատ ԶԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Պաշտպան» բացառիկ պրակ մը հրատարակէ: Թերթին եր-կայնութիւնն է 42 հարկերորդամետր, լայնը 30 հարկերորդամետր: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, և ամեն էջ երեք լայն սխեմաներու բաժնուած է: Թերթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ըն-տիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ:

«Պաշտպան» այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «Տայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման եւրօպական մեծ աղղաց շաբաթական պատկերազարդ թերթերու:

Կը տպուի մի բանի հազար և ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն:
Գինն է 2,50 ֆր. 1 բուրլի, 50 կօպէկ:

Այս ծանուցադրով կը հրաւիրենք մերազնայ այն ամեն ազնիւ ու զթած անձնաւորու-թիւնները, որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձգե-լու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի համնի, հաւաքուած գումարը և ոչչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Պաշտպան» պրակներուն մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ տողի դիմն է 25 սանտիմ.
Փափազողք փութան յղել իրենց ծանուցումները:
Մեր հասցէն է՝ Rédaction de la Revue «PAZMAVEB»:
(S. Lazare)

VENISE 1—5
(Italie)

7 годъ изданія
„КАЗБЕКЪ“
7 годъ изданія

Открыта на 1900 г. подписка

Ежедневное издание.

ГАЗЕТА ПОСВЯЩЕНА НУЖДАМЪ КАВКАЗА.

1900 году, по получении новой большой типографской машины, форматъ газеты будетъ увеличенъ до размѣровъ большихъ стальныхъ газетъ безъ увеличения подписной платы.

Подписная плата для городскихъ подписчиковъ: на годъ 6 р. на 1/2 г. 3 р. 50 к.

Для иногороднихъ: на годъ 7 р. на 1/2 г. 4 р.

Плата за объявленія со строки петита: Передъ текстомъ 15 коп. послѣ текста 8 коп.

Подписка принимается во Владикавказѣ, въ Главн. контора.

Новые подписчики на 1900 годъ будутъ получать газету въ текущемъ 1899 году, со дня подписки бесплатно.

Вниманію областныхъ подписчиковъ.

Редакція считаетъ нужнымъ обратить вниманіе областныхъ читателей на льготныя условія вы-писки газеты „Казбекъ“, установленныя для Терской области. Желающіе получать газету благоволятъ заявить о томъ Главной Конторѣ, препроводивъ два руб. При условіи дальнѣйшей аккуратной уплаты по одному руб. въ мѣсяцъ, до полнаго погашенія подписной суммы, газета будетъ высылаться въ те-ченіе года.
1—3

Շ Տ Ա Պ Ե Ց Է Ք

ԱՄԵՆԱԿԱՐԺ ԺԱՄԱՆԱԿ

Ա.Ս.Ա.ՔԻՆ ՏԵՂԸ 30 Կ.
ԵՐԿՐՈՐԻ ՏԵՂԸ 20 Կ.

Հսկայ-պատանի

Գ Ն Ե Ր Ը Պ Ա Վ Ա Ս Ե Յ Ր Ա Ծ Ե Ն
Ամենակարճ ժամանակ:
2—10

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձաւորի վանքի քարահանքից ամենաշնորհ տեսակի ՀԱՐԱՐԱՐԱՆ:

Ձ Ր Ա Վ Ա Ց Ա Ք Ա Ր Ե Ր

Մատչելի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն. Եվլախ, Կոնտոր Մելիք-Պապայան.

Որովհետեւ վերջերս երկացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:
2—40

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
М. 35,967
ФАБР. С. СІУ и К. МОСКВА.

1846. 1865. 1882. 1899.
ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ ԲԵՐՁՐԱԳՈՅՆ ԳՐԱՆ
Ա. ՐԱԼԼԵ և Ընկերակցութիւն
Կ Ր Է Մ - Ր Ա Լ Լ Է
Սրտակը 50 և 75 կօպ. Ծախվում է Բոտանո-տանի յայտնի խանութներում:
M. 89509

Բ Ա Գ Ի Ո Ւ Մ
Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱՎՈՎ 3. ԹԱԴԵՆՍԵԱՆՅԻ
(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)
Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍԵԱՆԻ
(քաղաքագրի Բագուի հայոց Մարգարիտական ընկերութեան)
Աշակերտներ ընդունվում են երթեկի, կիսադիւրքերի և դիւրքերի 7 տարեկան հասակից: Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կրթական գիմնազիա և բժշկական դպրո-մաներու համար: Առումը սկսված է սեպտեմբերի 6-ից:
Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնաւարան՝ Տէլէֆօնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Նիկողայարովի:
10—10

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն
Բ Ր Օ Կ Ա Ր ԵՒ Կ Օ Մ Պ.
Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ս
Գ Լ Ի Ց Ե Ր Ի Ն Ե Ա Ն Ս Ա Պ Օ Ն
Գլխերին փափկացող յատկութիւնը այնքան յայտնի է, որ կարիք չունի նորից գովե-լու: Գլխերին առաւել ՕԳՈՒՑ Է ԿՕՇԻՆ ՓԱՓԿԱՅՆԵԼՈՒ համար:
Գլխերին սապօնը չէ պարունակում իր մէջ ոչ ալկոլիական, ոչ էլ ուրիշ որ և է կծու մասեր, այդ պատճառով էլ նա մարմնին մի առանձին զովութիւն է պատճառում, պահպա-նում է կաշիի փափկութիւնը և աւելացնում է նրա սպիտակութիւնը: Կանանց և երեխաների սուպլէտի համար այդ սապօնի կաթնաման և մեծ քանակութեամբ փրփուրը ծառայում է իբրեւ ամենալաւ միջոց լուացվելու համար:
Առհասարակ մեր գլխերինեան սապօնը պարտական է իր յատկութեամբ իր մէջ պա-րունակվող մաքրված նիւթերին, որից նա պատրաստված է, իբրեւ ապացոյց կարող է ծառա-լել այն, որ նա այդպիսի հոգակ է ստացել և գրաւել է ժողովրդի առանձին ուշադրութիւնը:
Ձ Գ Ո Ց Կ Ե Ն Ա Լ Զ Ե Ղ Ծ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Ց
M. 87666